II

ԴԱՐԻ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Աշխարհը, և առաջին հերթին Ռուսաստանը, 1995 թ. մայիսի 9-ին արժանավորապես նշեցին երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 50-ամյակը։ Այդ հաղթանակը դիտվեց որպես XX դարի պատմական խոշորագույն իրադարձություն։ Մոսկվայում կայացած հանդեսներին մասնակցելու համար Ռուսաստանի մայրաքաղաք էին ժամանել 52 երկրների պատվիրակություններ, հիմնականում պետության ղեկավարների գլխավորությամբ։ Իրենց խոսքն ասացին Ռուսաստանի Դաշնության նախագահ Բորիս Ելցինը, ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը, Անգլիայի վարչապետ Ջոն Մեյջորը, Չինաստանի նախագահ Ցզյան Ցզեմինը, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանը, Գերմանիայի կանցլեր Հելմուտ Քոլը և ուրիշներ, որոնք բարձր գնահատեցին Խորհրդային Միության վճռական դերը ֆաշիզմի ջախջախման գործում։

Կարմիր հրապարակում և Պոկլոննայա Գորայի շրջակայքում հաղթանակի տոնակատարության արարողությունները, գրեթե բոլոր հանրապետություններից ռազմական շքերթներին վետերանների մասնակցությունը, ռազմական տեխնիկայի ցուցադրումը հաստատում է ոչ միայն այն ճշմարտությունը, որ Ռուսաստանը եղել և մնում է հզոր երկիր, այլև նախկին ԽՍՀՄ հանրապետությունները ևս՝ տերն են ու ժառանգորդը անցյալի սխրանքների, համատեղ զոհողություններով ձեռք բերած ռազմական փառքի։

Հայտնի է, որ 1940 թ. ապրիլի 9-ին գերմանական զորքերը մտան Դանիա և Նորվեգիա, մեկ ամիս անց՝ Բելգիա, Հոլանդիա, Լյուքսեմբուրգ։ Հունիսի 22-ին հաղթողների կամքին ենթարկվեց Ֆրանսիան, որին պատերազմ էր հայտարարել և Իտալիան։ 1940 թ. օգոստոսի 9-ից մինչև 1941 թ. մայիսի 11-ը, ամեն օր շարունակ տեղի էին ունենում գերմանական բանակի օդուժի հարձակումները Անգլիայի քաղաքների վրա։

Մեծ նվաճումներ և անօրինակ ավերածություններ կատարելով Եվրոպայում ու բացահայտորեն ցույց տալով, թե որն է իր նպատակը, Գերմանիան շրջվեց դեպի Ռուսաստան։ 1941 թ. հունիսի 22-ին գերմանական զորքերը հարձակվեցին Խորհրդային Միության վրա երեք ստրատեգիական ուղղություններով, խնդիր ունենալով արագընթաց երթով հյուսիսային կողմում գրավել Լենինգրադը (այժմ Սանկտ Պետերբուրգ), կենտրոնականում՝ Մոսկվան, հարավում՝ կտրել անցնել Ուկրաինան, դուրս գալ Դոնբաս, Մերձվոլգյան տափաստանները, Կովկասի խորքերը։

Հիտլերյան Գերմանիայի զորքերի ԽՍՀՄ-ի վրա ուխտադրուժ հարձակվելու առաջին իսկ օրվանից երկրորդ համաշխարհային պատերազմի ծանրության կենտրոնը տեղափոխվեց խորհրդա-գերմանական ռազմաճակատ։ Հենց այստեղ էր վճռվում ոչ միայն խորհրդային, այլև մյուս ժողովուրդների ճակատագիրը։ Խորհրդային ժողովրդի պատերազմը հանդիսացավ հիրավի Հայրենական մեծ պատերազմ աշխարհի մեկ վեցերորդ մասը կազմող, 22 միլիոն քառակուսի կիլոմետր տարածք զբաղեցնող երկրի բոլոր ժողովուրդների համար։ Միասնական շարքերով, համախմբված հանդես եկան ռուսն ու ուկրաինացին, հայն ու վրացին, բելոռուսն ու ղազախը, հրեան ու ուզբեկը, ԽՍՀՄ բոլոր ժողովուրդները։

Սկսվեց երկրորդ համաշխարհային պատերազմի նոր փուլ, պատերազմն ընդլայնվեց՝ ընդգրկելով նոր երկրներ, նոր ժողովուրդներ։ Գրեթե ամբողջ աշխարհը տրոհվեց երկու հակամարտ կողմերի։ Երկրորդ համաշխարհային պատերազմին ընդհանուր առմամբ մասնակցեց մոլորակի բնակչության 80 տոկոսը՝ երկու կողմերից հանդես եկավ 61 պետություն։

Պատերազմի հենց առաջին օրը, հունիսի 22-ին, Անգլիայի վարչապետ Ուինստոն Չերչիլը ի լուր ամբողջ աշխարհի բացեիբաց հայտարարեց, որ Ռուսաստանի վրա Գերմանիայի հարձակումով սկսվեց պատերազմի շրջադարձային փուլերից մեկը, և որ Մեծ Բրիտանիան Ռուսաստանին ու ռուս ժողովրդին ցույց կտա ամեն տեսակի օգնություն։ Ի պաշտպանություն Ռուսաստանի հանդես եկավ ԱՄՆ-ի նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը։ Հուլիսի 12-ին Մոսկվայում Խորհրդային Միության և Անգլիայի միջև ստորագրվեց Գերմանիայի դեմ պատերազմում համատեղ գործողությունների վերաբերյալ համաձայնագիր։ Չերչիլն ու Ռուզվելտը Ռուսաստանին օգնելու իրենց մտադրությունը կրկին հավաստեցին 1941 թ. օգոստոսի Ատլանտյան խարտիայով, որը հավանության արժանացավ Խորհրդային Միության ներկայացուցիչների մասնակցությամբ սեպտեմբերին Լոնդոնում հրավիրված միջազգային կոնֆերանսում։ Անգլիան, ԱՄՆ-ը, Խորհրդային Միությունը և նրանց շուրջը համախմբված երկրները միավորվեցին՝ Գերմանիայի, Իտալիայի, Ճապոնիայի և նրանց դաշնակիցների դեմ մղվող պատերազմը հաղթական ավարտի հասցնելու համար։ Ֆաշիզմի նկատմամբ հաղթանակի ժողովուրդների հզոր կամքը և կառավարող շրջանների ձգտումը՝ ժողովրդավարության նվաճումները պահպանելու համար, պայմանավորեցին ազատասեր ժողովուրդների շահերի ընդհանրությունը, որը հասցրեց ժողովուրդների ու կառավարությունների հակաֆաշիստական կոալիցիայի առաջացմանը։

Ֆաշիստական զինվորական հրամանատարությունը ԽՍՀՄ-ի դեմ նետեց հսկայական, տեխնիկապես լավ զինված, հանդերձավորված, պատերազմում կոփված բանակ։ Հանկարծակի, դավադիր հարձակումը սկզբնական շրջանում Գերմանիային ապահովեց ռազմական առավելություն։ Դա հանգեցրեց նրան, որ ԽՍՀՄ-ը պատերազմի սկզբում հայտնվեց խիստ ծանր վիճակում։

Հայրենական մեծ պատերազմի առաջին փուլում (1941 թ. հունիսի 22—1942 թ. նոյեմբեր), կասեցնելով «կայծակնային» պատերազմը, Կարմիր բանակը, անցնելով հակահարձակման, ի վերջո ձեռք բերեց կարևոր հաջողություններ՝ հաղթանակ Մոսկվայի տակ, Ստալինգրադի հերոսական պաշտպանությունը, որոնք պայմաններ ստեղծեցին Հյուսիս-ֆրիկյան, Ատլանտյան և Խաղաղօվկիանոսյան ռազմաբեմերում հակաֆաշիստական կոալիցիայի բանակների գործողությունների համար։ Կարմիր բանակի գործողությունները ոչ միայն ձախողեցին գերմանական հարձակողական պլանները, այլև պայմաններ ստեղծեցին պատերազմում արմատական բեկման համար։

Հայրենական պատերազմի երկրորդ փուլը (1942 թ. նոյեմբեր—1943 թ. վերջ) հանդիսացավ պատերազմի ընթացքի արմատական բեկման, Կարմիր բանակի պատմական հաղթանակների և գերմանական բանակի կործանիչ պարտությունների փուլ։ Դա նշանավորվում է նաև ռազմական արդյունաբերության թողարկման կտրուկ աճով, խորհրդային բանակի ռազմական արվեստի վերելքով։

Երկրորդ փուլի կարևորագույն իրադարձությունները հանդիսացան Կարմիր բանակի ռազմական հաղթանակները Ստալինգրադի և Կուրսկի տակ։ Ստալինգրադի տակ գերմանական բանակի ջախջախումը շրջադարձային կետ եղավ հիտլերյան Գերմանիայի դեմ պատերազմի ընթացքում։ Դա արմատական շրջադարձ սկզբնավորեց ոչ միայն Հայրենական պատերազմում, այլև ամբողջ երկրորդ համաշխարհային պատերազմում։ Կարմիր բանակի հաղթանակները նոր նպաստավոր պայմաններ ստեղծեցին ԱՄՆ-ի և Անգլիայի զինված ուժերի համար։ Է՛լ ավելի ընդլայնվեց դիմադրության շարժումը։ ԽՍՀՄ-ի,

ԱՄՆ-ի, Անգլիայի ղեկավարների Թեհրանի կոնֆերանսում (1943 թ. նոյեմբերի 28—դեկտեմբերի 1) համաձայնություն կայացավ երկրորդ ճակատի բացման մասին։

Հայրենական պատերազմի երրորդ փուլի (1943 թ. վերջ—1945 թ. մայիս) բնորոշ դծերը դարձան Խորհրդային Միության տարածքից գերմանաֆաշիստական զորքերի լրիվ վռնդումը, Կարմիր բանակի կողմից արևելյան և հարավ-արևելյան Եվրոպայի ժողովուրդների ազատագրումը ֆաշիստական լծից, հիտլերյան Գերմանիայի վերջնական ջախջախումը։ 1944 թ. նշանավորվեց ամբողջ Ուկրաինայի, Բելոռուսիայի ազատագրումով, Բելոռուսիայի շրջափակման լրիվ վերացումով, Ղրիմի և այլ շրջանների ազատագրումով։ 1944 թ. գարնանը խորհրդային զորքերը անցան պետական սահմանը։ 1945 թ. ձմեռային կամպանիայի ժամանակ Կարմիր բանակի հարձակողական գործողությունները հզոր թափ ստացան։ Թեև զգալի ուշացումով, բացվեց երկրորդ ճակատը։ Դաշնակիցների ուժերը ափ իջան Հյուսիսային Ֆրանսիայում, ազատագրվեցին Ֆրանսիան ու Բելգիան։

Սկսվեց և իրականացվեց ֆաշիզմի լծից Արևելյան և Հարավ-արևելյան Եվրոպայի երկրների ժողովուրդների ազատագրման մեծ առաքելությունը։ Տեղի ունեցավ հիտլերյան կոալիցիայի փլուզում։ Ֆաշիստական Գերմանիայի մի շարք սատելիտներ իրենց զենքն ուղղեցին նախկին դաշնակցի դեմ։ Պատերազմի երրորդ փուլը ավարտվեց ԽՍՀՄ-ի և իր դաշնակիցների լիակատար հաղթանակով։ Հավատարիմ դաշնակցային երդմանը, ԽՍՀՄ-ը մասնակցեց երկրորդ համաշխարհային պատերազմի վերջին փուլին (1945 թ. մայիսի 9—սեպտեմբերի 2), վճռական հարված հասցրեց կվանտունյան բանակին, որը և հանգեցրեց Ճապոնիայի պարտությանը։

Այսպիսով, Խորհրդային Միության 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմը, հանդիսանալով նրա պատմության ամենադժվարին ժամանակաշրջանը, միաժամանակ նրա ժողովուրդների պատմության ամենահերոսական ժամանակաշրջանն էր։ Աշխարհի ոչ մի ժողովուրդ չի տարել այնպիսի ծանր փորձություններ, ինչպիսիք բաժին ընկան խորհրդային ժողովրդին։ Երկրորդ համաշխարհային պատերազմն ավարտվեց ազատասեր ժողովուրդների փայլուն հաղթանակով։

Ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակը իր նշանակությամբ և հետևանքներով հանդիսացավ սերունդների ճակատագիրը որոշող կարևորագույն իրադարձություն։ Ֆաշիզմի ջախջախման գործում վճռական դերը պատկանում է խորհրդային ժողովրդին։ Պարտության մատնելով հզոր, բիրա ու խարդախ թշնամուն՝ Խորհրդային Միության ժողովուրդները, մյուս ազատասեր ժողովուրդների հետ միասին, փրկեցին ամբողջ աշխարհը ստրկացումից, «նոր կարգի» հաստատումից, համաշխարհային մշակույթը՝ կործանումից։

Պատերազմը լուրատեսակ խթան հանդիսացավ ԽՍՀՄ ժողովուրդների ուժերը ֆաշիզմի դեմ միավորելու համար։ Հիտլերը ցանկանում էր օգտագործել ժողովուրդների «ազգային» ձգտումները, «կենտրոնախույս» ուժերը։ Պատերազմը, սակայն, ցույց տվեց, որ Հիտլերը սխալվում էր իր հաշիվներում։ Ֆաշիստական ամբողջատիրության լծի տակ ընկնելու վտանգը՝ հակամարդկային ցեղային-ռասայական տեսության հիտլերյան քարոզչությամբ հան-

ղերձ, հանգեցրեց նրան, որ խորհրդային երկրի ժողովուրդները ելան ֆաշիզմի դեմ՝ հանուն ազատության և անկախության։

Հայրենական պատերազմը ոտքի հանեց նաև հայ ժողովրդին։ Զենքի կոչվեց ավելի քան 500 հազար մարդ՝ Հայաստանում և ԽՍՀՄ այլ հանրապետություններում բնակվող հայերի մեկ հինգերորդը։ Պատերազմի տարիներին Հայաստանը խորհրդային զինված ուժերի կազմում ուներ գրեթե ամբողջովին հայերով համալրված ազգային վեց միավորներ՝ 76, 89, 361, 390, 408, 409-րդ դիվիզիաները, Հայաստանում էր ձևավորվել նաև 138-րդ դիվիզիան։ Մեծ թվով հայեր ծառայության էին կանչվել կամ կամավոր գնացել ռազմաճակատ Հայաստանից, Ղարաբաղից, Նախիջևանից, Վրաստանից, Ադրբեջանից, Հյուսիսային Կովկասից, փոքրասիական հանրապետություններից, Մոսկվայից, Լենինգրադից և այլ քաղաքներից։ Միայն Լեռնային Ղարաբաղը բանակին տվեց 42 հազար զինվոր և հրամանատար։

Հայերը կռվել են ամենուրեք՝ Բրեստի ամրոցի պատերի տակ, Մոսկվայի մատույցներում, Ուկրաինայում և Բելոռուսիայում, Ղրիմում ու Վոլգայի ափերին, մերձբալթյան հանրապետություններում, Լենինգրադում՝ պաշտպանողական և հարձակողական մարտերում։ Նրանք արիաբար մարտնչել են ցամաքում, օդում, ծովում, աչքի ընկել պարտիզանական ջոկատներում, դիմադրության շարժման շարքերում։ Խոշոր է հայ զորավարների՝ 63 գեներալների, հազարավոր սպաների ավանդը մարտի դաշտում շահած հաղթանակներում։ Ռազմաճակատում մարտնչում էին հազարավոր հայ սպաներ, որոնք ղեկավարում էին ստորաբաժանումներ, զորամասեր։ Գեներալները մասնակցել են զորքերի տակտիկական ու ռազմավարական գործողությունների պլանների մշակմանն ու կենսագործմանը, ղեկավարել բրիգադներ ու դիվիզիաներ, կորպուսներ, բանակներ, ռազմաճակատ, օդային ու ծովային նավատորմ։ Ամբողջ աշխարհին հայտնի են Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանի, նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովի, ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովի (Խանփերյանց), զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանի անունները։ Իրենց փառքով ու պատվով են պսակել Խորհրդային Միության 113 հայ հերոսներ և Փառքի բոլոր երեք աստիճանների 27 ասպետները։ Անմոռաց են հանուն հայրենիքի զոհված ավելի քան 250000 հայորդիների անունները, որոնք զոհվեցին ռազմաճակատի տարբեր հատվածներում, հանուն Հայաստանի, հանուն Հայրենիքի։ Ավելի քան 70 հազար հայեր պարգևատրվեցին ԽՍՀՄ շքանշաններով ու մեդալներով։ Ազգային զորամիավորումներից 89-րդ Հայկական Թամանյան կարմրադրոշ կրկնակի շքանշանակիր դիվիզիան իր լեգենդար հրամանատար Նվեր Սաֆարյանի գլխավորությամբ հաղթական արշավով մտավ Բեռլին։ Միաժամանակ թիկունքում ռազմաճակատի համար արտադրվում էր ավելի քան 300 տեսակի ռազմամթերք ու հանդերձանք, զենք։ Շատ հայ մասնագետներ գլխավորում էին ռազմական գործարաններ ու գիտական լաբորատորիաներում մշակում զենքի նոր տեսակներ։

Հայերի համազգային խիզախությունը և հակաֆաշիստական պայքարում ակտիվ մասնակցությունը ուներ իր պատճառները։ Նրանք չէին մոռացել և չեն մոռանա Օսմանյան կայսրությունում կայզերական Գերմանիայի գիտությամբ ու հովանավորությամբ 1915 թ.՝ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հրահրված հայերի հրեշավոր ցեղասպանությունը, որը

ոգեշնչում էր և Հիտլերին։ Վերջինս գտնում էր, ինչպես և երիտթուրքերը, որ գլխավորը ոչ թե տարածքի նվաճումն էր, այլ տեղաբնիկների իսպառ վերացումը, բնաջնջումն ու արտաքսումը։ «Վերջիվերջո ո՞վ է այսօր հիշում հայերի ցեղասպանությունը», հայտարարել է Հիտլերը 1939 թ. օգոստոսի 22-ին՝ ելույթ ունենալով Օբերգալցբերգ քաղաքում զինվորականության ընտրանիի առաջ։

Հիտլերը, Գյորինգը, Ռոզենբերգը և ֆաշիզմի մյուս պարագլուխները չէին վստահում հայերին, նրանք գտնում էին, որ Կովկասում հարկավոր է օգտագործել մի կողմից բնիկների՝ վրացիների, հայերի, թաթարների և այլոց, մյուս կողմից՝ ռուսների միջև եղած հակասությունը, «ընդ որում հաշվի առնելով հայերի հատուկ անբարյացակամությունը գերմանացիների նկատմամբ»։

Խորհրդային Միության վրա հարձակվելու նախօրյակին՝ 1941 թ. հունիսի 18-ին Թուրքիան և Գերմանիան կնքեցին բարեկամության և չհարձակման մասին պայմանագիր։ Թուրքիային ընդգրկելով ԽՍՀՄ-ի դեմ ռազմավարական պլանների մեջ՝ Գերմանիան ապահովեց իր զորքի աջ թևը։ Թուրքիան թույլ տվեց, որ Սև ծով մտնեն գերմանական և իտալական ռազմանավեր։ Անդրկովկասին, մասնավորապես Հայաստանին հարող տարածքներում Թուրքիան այդ ժամանակ արդեն ուներ զորքերի զգալի կուտակում. նրանց թիվը հետագայում հասավ 26 դիվիզիայի։ Ստալինգրադի սպասվելիք անկումից հետո նրանք հարձակվելու էին Հայաստանի վրա։ Բարեբախտաբար այդ տեղի չունեցավ, քանի որ ֆաշիստական զորքերին խորհրդային բանակի հասցրած ծանր հարվածները կանխեցին նաև թուրքական զորքերի ներխուժումը Կովկաս և դրանով վերացրին նոր մեծ եղեռնի վտանգը։ Պատերազմի սկզբում Բեռլինում արդեն աշխուժացել էր պանթուրքիստների գործունեությունը։ Նրանց կազմակերպած ժողովներին ներկա էին լինում Հիտլերը, Թուրքիայում Գերմանիայի դեսպան ֆոն Պապենը և ոչ անհայտ Նուրի փաշան։

Ֆաշիստական Գերմանիայի բացահայտ թուրքամետ և հակահայկական քաղաքականության դրսևորում էր 1943 թ. փետրվարին Բեռլինից Ստամբուլ Թալեաթ փաշայի աճյունի մնացորդների տեղափոխումը և Թուրքիայում վերթաղումը։

Դաշնակիցների բանակում ֆաշիզմի դեմ մարտնչում էին ավելի քան 80 հազար հայեր։ Շատ հայորդիներ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իտալիայի ազգային հերոսներ էին։ Մեծ էր հայ եկեղեցու դերը հակաֆաշիստական պայքարում։ Սփյուռքահայության ուժերով ստեղծվեցին «Գեներալ Բաղրամյան», «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուները։

Մարտնչելով ֆաշիզմի դեմ՝ հայ ժողովրդի զավակները Կովկասյան ճակատում, Ստալինգրադում, պատերազմի հեռավոր մարտադաշտերում պաշտպանում էին իրենց հայրենիքը։ Անկասկած է, որ մարտի դաշտում նրանց թափած արյան, նրանց կյանքի գնով, իրենց մասսայական հերոսությամբ էր նաև, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայաստանը զերծ մնաց թուրքական նվաճողների ասպատակություններից։

Ահա ինչու ֆաշիզմի դեմ տարած պատմական հաղթանակը նաև հայ ժողովրդի հաղթանակն է։ Հաղթանակի օրը՝ մայիսի 9-ը, հաղթանակի օր է նաև հայ ժողովրդի համար։

КРУПНЕЙШЕЕ СОБЫТИЕ ВЕКА

Член-корр. НАН РА Г. А. АВЕТИСЯН

Резюме

Все прогрессивное человечество мира 9 мая 1995 года праздновало 50-летие Великой Победы над фашизмом. В начатой 1 сентября 1939 года Второй мировой войне участвовало с двух сторон 61 государство, сотни народов, населяющих планету. С вероломным нападением гитлеровской Германии на СССР 22 июня 1941 года началась Великая Отечественная война советского народа. Центр тяжести переместился на Советско-германский фронт. Образовалась антигитлеровская коалиция, включающая в себя СССР, Англию, США и др. страны. Великая Отечественная война была поистине Отечественной и для армянского народа, более полумиллиона сынов и дочерей которого встали на защиту страны от фашистского порабощения. Половина их сложила головы на полях сражений. В победе над фашизмом армянский народ видел и защиту самой Армении от новых турецких нашествий.